Գուրգեն ԱՐՍԵՆՅԱՆ

Ծնվել է 1959թ. դեկտեմբերի 22-ին, Երևանում:

1981-1982թթ. — ծառայել է խորհրդային բանակում:

Կրթությունը՝

1966-1976թթ. — Ստեփան Զորյանի անվան թիվ 56 դպրոց,

1976-1980թթ. — Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտ:

Աշխատանքային գործունեությունը՝

1980-1981 թթ. — աշխատել է Մոլդովայի Ռիբնիցա քաղաքի ցեմենտ-շիֆեր գործարանում՝ որպես տնտեսագետ,

1983-1986թթ. — Մասիսի շրջանի «Հայէլեկտրամեքմատ» միավորման ավագ տնտեսագետ,

1989-1997թթ. — զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ,

1997-2001թթ. — «Հայագրոբանկ»-ի խորհրդի նախագահ,

1998թ. — «ԱՐՍՕՅԼ» ՀՁՓԲԸ հիմնադիր բաժնետեր,

1999-2001թթ. — Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) երկրներ ագրոարդյունաբերական բանկերի միջպետական ասոցիացիայի փոխնախագահ,

2000-2003թթ. — ՀՀ ԱԺ 2-րդ գումարման պատգամավոր, ԱԺ ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: 2001-2003թթ.՝ ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի իրավական հարցերի հանձնաժողովի փոխնախագահ,

2003-2007թթ. — ՀՀ ԱԺ 3-րդ գումարման պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ: ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի իրավական հարցերի հանձնաժողովի փոխնախագահ, ԵԽԽՎ քաղաքական հարցերի հանձնաժողովի անդամ:

2012-2017թթ. — ՀՀ ԱԺ 5-րդ գումարման պատգամավոր, ՀՀ Ազգային ժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի անդամ, ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողով անդամ, Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) խորհրդարանական վեհաժողովի անդամ

2021-2024թթ. — ՀՀ ԱԺ 8-րդ գումարման պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի անդամ, ՀՀ Ազգային ժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի անդամ, ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողով անդամ, ՀԱՊԿ խորհրդարանական վեհաժողովի անդամ:

Պարգևատրումներ՝

1998թ. — Մոսկվայի 850-ամյակի մեդալ,

2005թ. — ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի «Համագործակցություն» շքանշան,

2006թ. — «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալ,

2015թ. — «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալ:

Ընտանեկան կարգավիճակը՝

Ամուսնալուծված է, ունի երկու զավակ:

ՀՀ նախագահի՝ 2024 թվականի օգոստոսի 14-ի հրամանագրով նշանակվել է Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան (նստավայրը՝ Մոսկվա):